

Կ-316-10.10.2019-ԱԱ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՂԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ղեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են լիցենզավորվել ղեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Ղեղերի մեծածախ իրացման լիցենզիա ստացած անձինք պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո չորս տարվա ընթացքում սահմանված կարգով ստանալ ղեղերի պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ ընթերցում

Կ-316-10.10.2019-ԱԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՂԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ղեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 5-րդ մասում «արգելվում է» բառից հետո լրացնել «; բացառությամբ Լիազոր մարմնի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում քաղաքացիներին տրամադրվող դեղատոմսով իրացվող դեղերի մասին հանրային իրազեկում իրականացնելու դեպքերի, որի իրականացման կարգը սահմանում է Լիազոր մարմինը:» բառերը:

Հոդված 2.1. Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ղեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են լիցենզավորվել դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Ղեղերի մեծածախ իրացման լիցենզիա ստացած անձինք պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո չորս տարվա ընթացքում սահմանված կարգով ստանալ դեղերի պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր:»:

Հոդված 3.2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| | Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|----|---|--|----------------|--|
| 1. | Նարեկ Զեյնալյան | <p>Հանել նախագծի 1-ին հոդվածը</p> <p>Հիմնավորում՝ Հանել առաջին հոդվածը, քանի որ այն ըստ էության նախատեսում է գովազդ, ինչը կարող է առաջացնել չհիմնավորված մեծաշնորհի, բացի դրանից նպատակահարմար չի համարվել պետական նպատակային ծրագրերի շրջանակներում քաղաքացիներին դեղատոմսով տրամադրվող դեղերի զանգվածային լրատվամիջոցներով հանրային իրազեկում իրականացնելը</p> | Ընդունվել է | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | Նարեկ Զեյնալյան | <p>Վերանայել նախագծի 2-րդ հոդվածը այնպես, որ «Երեք» բառը փոխարինվի «չորս» բառով, ավելացնելով նոր նախադասություն՝ «Դեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են լիցենզավորվել դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում»</p> | Չի ընդունվել | <p>Նախագծի 2-րդ հոդվածով փոփոխությունը կատարվում է գործող օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասում, որտեղ նույնպես նշված է սույն օրենքի ձևակերպումը և Ձեր կողմից նշված առաջարկությունը տեղին կարող էր լինել, եթե «սույն օրենք» ձևակերպումը նշված լիներ նախագծի անցումային դրույթներում: Միաժամանակ հայտնում եմ, որ նախագծի 2-րդ հոդվածում «Երեք» բառը «չորս» բառով փոխարինելու անհրաժեշտություն չկա, քանի որ ձևակերպված է հենց չորս բառով:</p> |